

են գալիս ճապոնացին եւ անգլիացին, որ ինչպէս յայտնի է մի մագ անգամ չի շեղւի երբէք իր սովորութիւններէն եւ որ ընդունել անգամ կարող չէ, թէ աշխարհի երեսին ուրիշ կերպ կարելի է ապրել:

Ճապոնացու հայեացքով ուտելիքից վերցնելն ու միասին տանելը մի մասնաւոր պատիւ է համարուում տանտիկնոջ համար, քանի որ դա մի շատ պարզ ու շօշափելի ապացոյց է, թէ հիւրը գոհ է մնացել նրա սեղանից:

Դա հերիք չէ. տուն տանելու համար տանտիկինը ճաշից յետոյ դեռ տալիս է հիւրերին բարակ տաշեղներէն շինած մի-մի փոքրիկ արկղիկ, լիքը եփած բրինձով:

Ճաշի ժամանակ կերակուրները բերելու կարգն անգամ բոլորովին հակառակ է մերինին:

Քաղցրեղէնը բերում են ձկան, բանջարեղէնի եւ ապուրի հետ խառն: Ամենից վերջը հրամցնում են հում ձուկ, նորից տուն տանելու համար: Ինչպէս տեսնում էք Ճապոնում հիւր գնալը բաւական ձեռնտու բան է:

Ճապոնացիք չեն գործածում ոչ միս, ոչ կաթ եւ ոչ հաց: Բայց եւրոպացու համար ծախում են: Նրանց գլխաւոր ուտելիքը բրինձն է, ձուկը, բանջարեղէնը եւ ձուն: Ի դէպ՝ ձուն էլ շատ տարօրինակ է. կճեպը այնքան փափուկ է, որ սեղմելիս ներս է ընկնում: Ճապոնում կիրը քիչ է. այդ պատճառով էլ ձուկի կճեպը չի պնդանում:

Ճապոնացիք լողանալ շատ են սիրում: Բաղանիսները ընդհանուր են. տղամարդիկ եւ կանայք լողանում են միասին: Շատ եւրոպացու համար դա մի նշան է համարուում բարքերի ծայրայեղ անկման, մինչդեռ իրանք՝ ճապոնացիք, այդտեղ վատ ոչինչ չեն տեսնում, դրա մասին չեն էլ մտածում եւ